

գիւղացիները իրանց կարիքների համար, 3) Սարդեր և ճանճեր, Լիբէնեխտի, 4) Հարուստները և Աղքատները, Բախի, 5) Հայ, Լոյս և Ազատութիւն, Պեշեխոնովի, —«Եւսնըի» հրատարակութիւններ են. 1) Տնտեսական Զարգացման ֆազերը, Բ. Իշխ. 2) Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արևմուտքում, Վուդովոզովի. 3) Աւարիայի ծգնաժամը, Կառլիկի, Նորմալ 4) բանուորական օր, Զեյդէլի, 5) Մարքսի յաւելեալ արժեքը, Շտերնի. «Կայջի» հրատարակութիւններն են 1) Կառլիկու «Հայրենասիրութիւրը» և 2) Բրակէի «Կորչեն Սոց.-Դեմոկրատները»:

Այդ բրոշիւրների մէջ նկատում է աշխատանքի հապճեպութիւն, լեզուի արուեստակեալ, «ինտելիգենտ» կազմութիւն, որ հազիւ թէ դիւրացնի բուն ժողովրդի ընթերցանութիւնը. Պէտք է ասել որ փոքր ի շատէ ինտելիգենտ ընթերցողները մեղանում այդ տեսակ բրոշիւրների հետ ծանօթ են լինում արդէն ոռւսերէնով, հետևաբար թարգմանողները պէտք է ի նկատի ունենան մեր հասարակ գրագէտ մասսան, իսկ նրա հետ զրոյց անելիս պէտք է աւելի պարզ, ժողովրդական դարձուածներով միտքը արտայայտել. մի բան որ ի հարկէ աւելի մեծ աշխատանք է պահանջում քան մեքենայական թարգմանութիւնը «ինտելիգենտ» ոճով: Խնդիրը բրոշիւրների քանակի մէջ չէ, այլ և որակի:

Մ.

Աւրաբես, Հաղափրութիւնը Կովկասում, հեռազօտութիւն, Ալէքսանդրապուլ, 1906, գ. 10 կ.

Այս գրքոյկում հեղինակը նպատակ է դրել ռամփոփել թէ ինչ վիճակում էր հողատիրութիւնը Կովկասում Խօլամի տիրապետութեան ժամանակ և ինչ վիճակի ենթարկուեց ոռւսական տիրապետութիւնից յետոյց: Բրոշիւրի տենդենցը այն է որ թուրք բէզերը, խաները և աղալարները, օգտուելով ոռւս կառավառութեան անտեղեակութիւնից, իրանց հողերի «կալուածատէրեր» և գիւղացիների «ճորտատէրեր» դառան, մինչդեռ իսլամի օրէնքով հողը համայնական է և հողը պիտի ճանաչել պետական, բաժանել երկրագործ դասակարգին առանց որևէ վարձատրութեան: Հետազօտութեան փաստական մասը թոյլ է: Ազրարային հարցը տեղական կոմիտէտներում վճռելիս այս հետազօտութիւնը կարող է պարզել մի քանի կէտեր:

Մ.